ՈՒծային և անթերի խորհուրդ» է պատուած։ Բոլոր եկեղեցիներն էլ կատարել են առաջ Հայոց պահած աւանդութեամբ, մանաւանդ Հռոմայ եկեղեցին մինչեւ Աղէքսանդր Բ. և Ցուլիոս պապերը. Ցունաց եկեղեցին էլ միայն յետոյ է սկսել ջուր խառնել. իսկ Ծնունդը Դեկտեմբերի 25ին սկսեցին կատարել Ոնորիոս և Արկադիոս կայսրների հրամանով(*)։ Մենք հետեւում ենք Լուսաւորչին, որին հետեւել են և Ներսիսեանք (Շնորհալին և Պահլաւունիք առ հասարակ)։

Նոքա պնդում են, թէ երբէք անհնազանդ չեն եղել կաթուղիկոսի դէմ, մինչդեռ «սուտակասպաս, տգէտ և քսու» մարդկանց լսելով, «անւանդ քո ի վեր. մեր կոչմանէ զրկել ջանաս»։ Մենք ոչ մի բանում չենք թերացել ձեր առաջ, ընդհակառակ «վս. ձեր բաղում նախատինս և անարգանս ընկալաք ի ներքնոց և յարտաքնոց»։ Ուղարկել էիք մեզ կանոնական և վարդապետական վկայութիւններ, որ առաջինը չէր և որոնց պատասխանը ժամանակին գրել ենք և ուղարկել. վկայութիւնների մեծագոյն մասը չեն վերաբերում ջրի խորհրդին, բոնազբօսիկ են բա-



Պատկեր 225ա.



Պատկեր 225բ.

ցատրութիւնները. իրենք իրենց կողմից մատնանիշ են անում ուրիշ վկայութիւններ։ Կաթուղիկոսի կողմից խրախուսւում են այնպիսիները, որոնք «անխտրաբար յամ. կերակուրս և ի բանս և ի գործս հեշտութեամբ. վարին», իսկ իրենց աչքում այդպիսիները «պատճառ հայհոյութեան.» են կաթուղիկոսի անուան, կրօնի, եկեղեցու, և ոչ սիրոյ միջնորդ»։ Յետոյ կը տեսնենք, որ այստեղ ակնարկուած է Զաքարիա Ծործորեցին։

Թղթից իմանում ենք նաև, որ կաթուղիկոսի Գրիգոր Նուիրակը վճռական կերպով յայտնել է, «թէ հոգեւոր տնն. հրամանք է, թէ որ ոք յանձն առնու զՀրով պատարագելն և ի դեկտեմբերի իե. զծնընդեան տօնն կատարել, այնոցիկ մեռոն տուր և ՈՒհէ, և որ ոչ կամիցին ի սբ. խորհուրդն զՀուրն խառնել և ի դեկտեմբերի իե. զծնունդն առնել, այնպիսեցն. մեռոն մի տալ և մի՛ ՈՒհել զայնոսիկ»։ Իրենք «իշխանօք և ազատօք, վիշօք և քՀնայօք և ՈՒ սրբազան ժողովրդովք» խորհուրդ են արել և բացասական եզրակացութեան հասել, հրաժարուելով և մեռոն ստանալուց։ Թուղթը վերջանում է այսպիսի խօսքերով.

«մեր ջանն և կամքն այս էր, որ չլինէր մեզ ի մէնջ բաժանել և ով ոք եղեւ պատճառ և լինի, ինքեանք տայցեն պատասխանի ՈՒյ»։ Այս վերջին ակնարկն էլ Զաքարիա Ծործորեցուն է վերաբերում, ինչպէս պարզւում է Աւարպելու Զաքարիային գրած պատասխանից։

Յովհաննէս Աւարպելը իւր թղթով պատասխան է գրում Զաքարիային «Էքսարխոսիա Հայոց», այսինքն կաթուղիկոսի տեղակալին արևելքում, որ ողջունի և անձնական տեղեկութիւններ տալու հետ, յորդորել էր «ի ճշմարտութեան. խոկումն և ի . . . հրամանաց կատարումն»։ Պատասխանը պարզ է և խիստ. նա հեգնութեամբ գրում է, թէ ի՞նչպէս է որ, «սկզբանն տարոյն» «հետեւեցար ճշմարտութեան.» և մեզ խորհրդակից չարիր. այս տարի էլ մեր բնակութեան մօտով գնացիր «ի դրունս աշխարհակալացն և ոչ երբէք հարցման կամ տեսութեան. արժանի արարեր», ուստի

(*) Պատմական այս տեղեկութիւնները, գրեթէ, բառացի կրկնուած են Նչեցու չրջաբերական-դաւանաբանական Թղթի մէջ, որ ապացոյց է Նորա մասնակցութեան և այս Թղթի խմբագրութեան մէջ։